

ԿԱՐՈՊԵՏ ՄԿՐՏԻԶԵԱՆ


ԿԱՊՈՅՑ ԶԱՅՆ

1946

ՀԱԼԷՊ


8 ԿՂ. Ն. Օ. Օ. Ի. Ի.

Journal of the
Royal Society of Medicine



1911

1912



ԿԱՐԱՊԵՏ ՄԿՐՏԻՉԵԱՆ

ԿԱՊՈՒՅՑ ըստ

ՇԻՆ
ԿԱՊ



1946


ՀԱԼԵԳ



ՅԱՊ. ՆԱԳԻՐԻ


1940

1940



1940

1940



202

Իմ շատ սիրելի ուսուցիչ

ՇԱՀԱՆ Ռ. ՊԵՐՊԵՐԵԱՆԻՆ

Նրախազիսական զգացումներով

Կ. Մ.

Ալեյ, 18 Օգոստ. 1945

Սիրելի՛ Կարապետ Մկրտիչեան,

Քերթուածներուդ Տետրակը իմ մօտն ես
ձգած ու փափաքդ է որ գրեմ քեզ անոնց մա-
սին: Կը թղթատեմ, կը կարդամ... , ու յան-
կարծ թերթերուդ մէջ կը գտնեմ Վահան Թէ-
քէեանի նամակը — որքա՛ն սրտառու է՝ հիմա
իր գիրը մեզի համար, հիմա որ չկայ ինք ու
մեռած է իր Զայնը, ու մենք մեր յիշատակէն
կը դնենք իր բառերուն այն շեշտերը, զորս ինք
պիտի դնէր անոնց իր կենդանի ձայնովը. — Ու
դարձեալ, որքա՛ն թանկագին իր վկայութիւ-
նը, երբ այնպէս մեկնած մեր մէջէն կը մնայ
ինք սակայն միշտ մեր արդի բանաստեղծու-
թեան մեծագոյն վարպետը, — ուստի եւ չեմ
կրնար գիմագրել տեղս իրեն տալու փափա-
քին:

«Զեր երկրորդ նամակն է միայն, 15 Մա-

յիսի, որ ստացած եմ իր մէջի քերթուածով: Թէ ինչպէս, հակառակ փափաքիս, անոր չեմ պատասխանած մինչև հիմա, գիտեմ, բայց զուր է բացատրել, որովհետեւ արգելքները մէկէ աւելի եղան աւելնալով օրէ օր՝ առանց ըսուելու արժանի ըլլալու:

Իրաւ է՝ որ զիս ուրախացուցիք Ձեր քերթըւածովը, որ ինծի ուղղուած ըլլալուն համար եթէ սրտիս խօսեցաւ, զիս գրաւեց նաև իր գեղեցկութեամբը, — գիւտեր՝ հասկացողութեան և համակրութեան ծնունդ, ե՛րբ՝ գիւտերէն բխած, գիւտերը՝ քիչ մը մշուշի և երզը՝ խուլ «գէմ»ի մը մէջէն յայտնուող...:

Պէտք կա՞յ ըսելու թէ ուրախութիւնս չընորհապարտ է Ձեզի, նաեւ Ձեր սիրելի ուսուցիչ և իմ շատ սիրելի բարեկամ Պ. Շահան Պէրպէրեանին՝ որ Ձեզ գրգեր է քերթուածը ինծի հասցնելու՝ անշուշտ իր դասաւանդութեամբ «Բանաստեղծութիւնը սիրել» տալէ ետք Ձեզի, և ոչ միայն սիրել՝ այլ շարունակել, ճոխացնել ալ...»:

Այսպէս է ուրեմն վկայութիւնը Թէքէեանի այն քերթուածին համար, զոր նուիրած ես իրեն:

«... Գիւտեր՝ հասկացողութեան ու համակրութեան ծնունդ, երբ՝ գիւտերէն բխած, գիւտերը՝ քիչ մը մշուշի և երզը՝ խուլ «գէմ»ի մը մէջէն յայտնուող...»:

Ինչ համար, իմ կարգին, ուրախութիւն է մեծ — քերթող — բարեկամիս քերթուածիդ մէջ գնահատած՝ իրաւ բանաստեղծութիւն չի-

նող այդ «ուրակը» հաստատել քերթուածներէդ
շատերունը իրրեւ — ուր բառերը — յաճախ
ինչքան փոքր, պարզ ու մերկ — իրենց որքան
անսպասելի՝ նոյնքան և բարեբախտ հանգիս-
տումովը նոր երանգ կարծես կուտան իրարու
— ձայներէն գոյներ արտաբերելով ու գոյներ-
էն բոյրեր, համեր, հպանքներ — և իրենց-
մով սգեկոչուած կեանքի իրերը, էակները,
պահերը կը փոխադրեն իբրեւ բնազանցական
մակարդակի մը վրայ, հոն զանոնք — հատ-
ուածային յանգերով գեռ եւս երաժշտացած
ու յաճախ նորատիպ կշռոյթի մը հմայքովը
— ինորհուրդին մէջ ալակերպելու :

Կը շնորհաւորեմ, միանգամայն շնորհա-
կալ ըլլալով Ձօնին համար, որով կը պատուես
զիս ,

Ու կը մնամ սիրով

Ծ. Ռ. ՊԵՏԻՆՔԵԱՆ

ՎԱՀԱՆ ԹԷՔԷԵԱՆ

Պիտե՞ս, գոցուող արեւին մեջ այս պարսեզը սրբի,
Հեռուէն՝ խորունկ մայրիներ կը մըսածեն՝ զանգուած ամպ,
Նոյն յոյզ խորհուրդը տեսնւմ, վանականի լուսեամբ,
Ըմպած այդպէս, օրն ամբողջ, արեւուն սուզը ոսկի...

Իզձի, գոյնի բուշուններ կը ցայտեն, խօ՛յ, սարսուզին,
Աղօթի ձեւ մութերէն, երբ հոն մըսած ես արդէն...:
Խորունկ ձայներ, փոխանցիկ, ու բոյրն ու շաղը Գեղին,
Լոյս — սուտեռոտ ջուրերու վազէն մեղմիւ բխէն...:

Տակաւ անցնող մեծ սէրեր, հոգիիդ դէմ տրտման,
Ըսուերներու պէս՝ զաղսնի, կը շրջին հոս, վիրաւոր...
Ու շուրջդ ամբողջ բուփ ու ծառ, լուռ սրբերու պէս կ'երգեն,
Լեցուն՝ լոյսով մը հընչել, եւ իմաստով մ'հոգեղեն...:

Բայց երբ կ'իյնայ մութը խոր՝ խընջոյփն մեջը հսկին,
— Ու դուն այլեւս բնակիչ՝ աստղերն ըմպող պարսեզին —
Մայրիներով պարսեզն այս, մութ ներդեհի պէս կ'այրի,
Որուն մեջէն մերթ ընդ մերթ հրնուսնի մը լոյս, կը ցարի...:

Ու ինչպե՛ս սիրոյ իրիկունն է սրխուր...
Եւ ինչպե՛ս աղուոր ես դուն այս իրկուն,
Դեմ դիմաց, քոյլ հովին ճակ ծառերուն...

Իմ փափուկ, պրզսիկ աղջիկ, ի՞մա ես դուն...

Ես միմակ շրնչեմ այդպէս աչերուդ
Աչերուդ ձեռք տափուկ, բոյրդ բուխ,
Ու ինձի գիշերին մէջ ալ վառիս..

Դուն ի՞մա ես, պրզսիկ աղջիկ. — իմքս չե՛ս...

Ինչո՞ւ դուն լոյս ու հեռանք կ'ըլլաս քաւմ.
Մաւր ու ցաւ ալ կը քորես այդպէս լուռ
Իմ տգոյն հոգիիս մէջ այս իրկուն...

Դուն ի՞մա ես, պրզսիկ աղջիկ, — իմքս չե՛ս...:

Տըխուր է ուրախութիւնըդ իմ մէջ
Նրբ հիմա անհոգ ու խենք, մոռցած քեզ
քեզդ ուսիս ալ կը նետես ու կ'երգես...

Ըսե՛, իմ աղուոր աղջիկ, ի՞մա ես դուն...

Գիւերին, յոգնած ու մուր գիւերին՝
Սերը մեր: Լոյսի սարսուռ, երգ անհուն:
Ու հասնում, միայն հասնում ես ինձի...:

Դուն ի՛մա ես, պզտիկ աղջիկ, իմըս չե՛ս...:

Ձափ (3—4—3)

ԱՆՑՆՈՂԸ

Թ.-իճ

Պյա իրկուն, երբ անձրեւէն վերջ, հովուն,
Անանուն կ'իյնայ ցաւը ձայներուն,
Թըրվրոուն կ'անցնի աղջիկ մը հեռուն...

Ի՜նչ մեկին, երգը խառնեալ հասակին,
Ու հոգին, գոյնովը գոչ նայումսին,
Զիս հեռին, խաժ իղձերուն կը տանին...

Ու կ'անցնի...: Բայց հետքերուն հետ գաղտնի
Երգն է կէս, սեր-իրիկուան ցաւին պէս,
Ուր այնպէս կեանքը տեւէ՛ր, մի՛տ, կ'ուզես...:

Բայց ուրկե՞, շարունակուիլ կը սկսի
Կը մեծնայ երգը իմ մէջ... , կ'աւարտի.
Սարսուռի որպէս աղօթք մը Սուրբի...

Ու հովուն, տեսում ու գործ այս իրկուն,
Ան անցաւ. ու բնաւ ալ չը գիտցաւ
Որ դրաւ իմ մէջ իր անձը անբաւ...:

(3—4—3)

Մինա Գուսպարեանին

Մեծ բակին ծոցն ծառերուն կը կաթին,
 Հրնուագին, ասղերը սէր, երկնին.
 Ու հոգին՝ խորհուրդ՝ հեռակ համերգին...

Գիշերին, այսպէս անուշ գիշերին,
 Մեծ բակին կը Երնչէ խոր, խաժ ոգին.
 Պզտիկ ցաւ մը կը մըսի ամէն դին...

Ու ծրփուն՝ բսուերներուն ցոյցըլուն՝
 Հասակներ, լոյս ու ծիծաղ հասակներ
 Ճեմելէն, կուտան հովին երգ ու սէր:

Ու բոյրեր կ'երգեն ուրախ, ծաղիկներ...
 Ամէն ոք կը տեսնէ *Լոյսն իր* անտես,
 Սրտերն այս, փաղցր ցաւէ մ'առնուած՝

Իբր այսպէս, ըսեն նոյն բանը կ'արծես:
 Զանգ մ'յանկարծ կը տանի երգն՝ աղօթի.
 Մեծ բակին գիշերն մինա՛կ, կը մըսի:

(3—4—3)

Պչֆերդ թոյլ, երկդիմի, սարսուռ ունին, օձ սիրուն,
Պելսեր մը նուրբ, զուսպ բերան, մարմինդ ամբողջ՝ սեր ու զոյն,
Աղջընակի պէս դիւրիչ, հեռուէն ալ՝ արհեսնի,
Երջանի՞կ ես այդպէս պերն, դուն՝ հրմայող՝ անուանի...:

Կ'ըլլաս երբեմըն մինակ, մըսածումի մը պէս լուրջ,
Կ'ըլլաս բերել ու զուարթ, ձիւրֆերէդ վեր զերդ անուրջ,
Կ'ուզես սիրել ու սիրուիլ..., ու փոյթ չէ քե քեզ համար
Ըլլան ասոնք աւերակ, լեզուի վերֆեր անհամար...:

Կը զալարիս: Կը խածնես: Քըմանանոյք անհանդարս:
Գիտակցօրէն կը սիրես յանախ շահիլ մահը պերն,
Բանաստեղծի հոգիով, ճառապանքէն ալ շատ վերջ:

Բարեկամ ես ամենուն, եւ ամենէն ալ ասուող,
Ունիս հոգի ու սիրս ալ, լո՛ւռ, կուրծֆիդ մէջ բաբախող...
Սակայն ինչո՞ւ, օձի տեղ, չանուանեցին զքեզ ՄԱՐԴ:


ՊԱՏՈՒՀԱՆԷՍ

Պատուհանս կը յոգնի գիշերը լուրջ ու քախձոս.
Պզտիկ լոյսեր աղեխառօ, բոյլ աչքերու պէս կարօս...
Մերք հաջոցներ շունքերու, ծառերու հեւք մեղմագին,
Մարդերու հոտ երբեմն ալ, փողոցէն վեր կը բըխին...

Կեանքը՝ համեղ՝ բնութեան, պիսակ պիսակ լոյս ու շուք,
Յիշատակներ սքսմօրօր՝ քաղցր ցաւի կարկըրուք.
Պատուհանս ալ ինչպէ՛ս հոծ լրութիւնը աղուոր...
Բայց բերեւս ուրա՛ն շատ կը տառապին զլսիկոր,

Ուրա՛ն խեղներ, որք տղաք, խոտոր ու փակ դրանց մօտ.
Թերեւքս ափ մը ստուեր հիմալընիս, զերթ փոշի.
Կը լուայ լուռ, պատանի աչքերն անոնց մօտ գործի...

Քաղաքն այսօր ա՛լ կ'այրի, լուռ արցունքի պէս ցաւօտ,
Իսկ տունքը սրբի պէս, կը սրբօրհն, կը հեւան...
— Ձայն մը յանկարծ կը հոսի խորունկ ցաւի մը նըման...



ԱՆՆ, ԱՅԴ ԻՐԻԿՈՒՆԸ ԱՇՆԱՆ...

Յիգրան Մակարեանին

Թրք ուր նիհար ծառերուն՝ առունը նո՛ր է զբլսեր
Տափ ու անուռ դողերով, ծոյլ իրիկուան գաղջ մուրեկն
Կը բխի Կիւնը պզտիկ, հոգիիդ մէջ տարօրէն,
Բարուրեան պէս անըզգած, յիշատակի պէս անմեռ...

Բոյրն իր հազար ձայնով երգ, ամող հեռո՞ւ անտառներ.
Օ՛, խենթ իր գոյնը տափուկ, քեզ կը սեղմէ, կ'արիւնէ...
Մըտերմութիւնը տունչին՝ ուր հաւատուած բուռ մը սէր,
Շընորհն անոր նայուածքին, մութին՝ հեքեք կը պատմէ...:

Ու կը զգաս փոքր ըլլալու ուրախութիւնը գաղտնի
Կընծջ մը, զոր ես սիրած, չըսած դեռ բառ մը հեւքի...,
Ու կը ձրգես ուր հիմա ա՛լ երազին քեզ տանի...

Առնան թխուր լոյսերէն հրնուտնք մը մեղմ ձեւերու
Հոգիիդ մէջ կը յուզէ Կիւնը պզտիկ ու աղու...
— Ա՛հ, այդ իրիկունը բարի, իմ մէջ ինչո՞ւ կը հասնի...:

Այժմ սեւուքիւն մը այսօր, զիս կը կրծէ հոգեւից.
Կը կասկածիմ, ո՛վ պզտիկ, դուն իմըս չե՛ս լիովին.
Ու ես իստուր եմ, իստուր, սակայն ինձմով, ո՛չ քեզմով,
Որ չը կըրցայ իմ մէջ՝ զիս մեծահարեյ, սպաննել...

Ու չեմ կրնար պահ մը իսկ, ես ինքզինքես ազատիլ,
Հոգիս բանալ ամենուն, անանձնական ու զգալ
Քերքողական հոգիով, բոլորէն վեր, լա՛յն, բարի,
Ու քեզ սալու իմ մէջէն քու իրաւունքը քեզի...

Ա՛յ դուն կրնաս ուրիշին ամբողջովին տալ հոգիդ,
Եւ ուրիշի մը հոգին այնքան մօտիկը սրբիդ...
Սիրել, սիրուիլ ուրիշին, եւ երբեմն ալ ինձմէ...
— Կ'ազնաւ ինքզինքես, ո՛վ պզտիկ, ազա՛ս, շա՛ս մեծ՝ ես ինձմէ...:

Պիտի երբեք չըմբռնես դուն այս հոգիս, ի՛մ պըզտիկ.
Տարօրինակ ու տարտամ, հեռուն վազող խա՛ղ ջուրի,
Կը փալիլիլի ֆեզ հիմա, կը ստուերոտի ֆիչ ետք, լուռ...

Երբ ձեւերեդ կը բխի հոգիդ աղուո՛ր, հո՛ձ՝ ինձի,
ձիւղ այդ պահուն, շատ ուժգին. սեղմել կ'ուզեք ֆեզ հոգիս...
«Գընա՛» կ'ըսեմ բայց իսկոյն, — չե՛ս հասկընար, կը զբարի՛ս...

Կը մօտենաս երբ վախկոտ, պզտիկ լոյսին իմ սրբի
Քանի մը օր, ֆաղցրահունչ կ'երգեք նուագը լոյսի...
Կը հեռանամ ֆեզմեք որ հոգիդ՝ մինա՛կ, տառապի,

Ու տառապիմ ե՛ս ալ՝ լուռ, որ չը հասնիս դուն ֆեզմեք,
Ու չը հասնի լոյսու մեղր սա կարծեցեալ սերը մեր,
Ան միտ դառնայ ալ ինձի, շատնայ ֆեզմով իմ գիշեր...:

Սակայն յոգնած, խեղճ պզտիկս, ֆիչ մը դըժնեք այս խաղեն,
Դուն խոյս կուտաս ալ ինձմեք, վրիժառու՝ կը դաւես,
Որմե՛ք հոգիս, շա՛տ զբոսը, կը վարժըլի խեղճ սիրոյս...

Բայց դուն երբեք չըմբռնե՛ս պիտի հոգին իմ այս պիրկ...:

ԳՆԱ՛, ՊԶՏԻԿ...

Պնա՛, պզտիկ, խեղճ տղայ, գնա՛ այդպես անաւարտ,
Տար քեզի հետ չապրելւած պատանուքիւնքս դըժբախտ,
Լոյս փողոցի մարդաւաս, կամ անհառի մը մէջ հով,
Ըրեմ իրկուն միասին, դուք միասեղ գրկանքով...:

Ան կը պատմէ քեզ այդտեղ, իր խեղճ ըղձանքն երազին...
— Ըղձաց հեւքը հասակին, ու հոծ աչքեր, զուսպ շարժում,
Որ աստմներն ըսպիտակ, բարձ արտերու մէջ ժրպիտ,
Հոգին զուարթ ու հարուստ, խարտեաճ փրփուր ունենայ...:

Սիրե՛ զինքը, ով պզտիկ, եղիր իրեն դուն ընտել,
Տըղան է ան, որ երբեք չէ կրցած մեկը սիրել,
Ու ան սիրէ պիտի քեզ, ու սիրե՛ց ալ... դուն զիտցա՞ր...:

Իր երազուած ըղձանքին քաց ուռուականը ինչպե՛ս
Մըտաւ մէջը հասակիդ, ու աչքերուն տեղ աչքերդ,
Ուր իմ հոգին ու հոգիդ կը շրփոքեն, տե՛ս, զիբար...:

Պը կախուի իրկունն մեդի ցոլեռեն,
Ծառերեն զրմուխս ժրպիս բանալեն.
Մինչ հեռուեն՝ հեւերն հազար կապոյսին...

Գոյներու պարեզ ուրախ՝ իմ հոգին:

Ու ծրփուն վիճը հովուն, իրերուն,
Սարսրուն հոգին սափուկ ձայներուն,
Ծիծաղին բոժը կապոյս հասակին՝

Մըսերիմ երգեր՝ հրնուանք իմ սրտին:

Բոյերու իրկունն ինչպէս երգեհոն,
Իղձն աղու ծալիկներու *կեանքը* հոն,
Ու պուս պուս ներքընչումով մը նեօսին,

Ըսես քէ սակաւ կ'անցնիմ սարսուազին:

Ու այսպէս, խաւսեաւ, բուրեան երգ մ'ինչպէս,
Սրտի պէս, կը հասնի Պահր անսեւ...
Ու հոգիս իրերուն մէջ կը հալի...

— Օ՛, իրկո՛ւն, եղար ինձի փոյր հոգի...

(3—4—3)

ՅԻՇԵՐԳ

Պետունին, հովը սրտում առունին,
Հըծծագին կը բախե դուռըս ուժգին,
Ու կ'առնե, ու կը սանի զիս հեռուն...

... Կը յիշեմ մարդով սափուկ տունը իմ,
Մեր բակին մեռնող ժառանգ արեւին,
Ծեր սիրոյ խենք կոստումն եր ջորդանն հին ..

Ինչ ուրախ՝ անձրեւը մեր փողոցին,
Մինչ անդին, երդիքներու հովը ցիր,
Մայր մը ծեր կը լողե ծակ սանիքն իր...

Ահ, ինչպե՛ս, հովը սրտում առունի,
Կը բերե իր հետ ինձի, պարմանի
Յուզումն այն, իմ պարզ օրուան, խենք օրուան...

Կ'երբայի մեծ քլլալու, ամայի
Խուցերու մեջ ալ ես զիս բանեղու,
Առ յաւեհ բաժնուելու կ'երբայի...

Ու սարի ինձի հետ տունըս բարի...
Ցերեկին՝ արեւին գոյնը բերրի,
Աղիւսէ յուր անոր կ'արիւնէ...

Սենեկիս ծանր ու մութ՝ գիշերին,
Ըզգամ երբ մեցնուքեան սառը լրոին՝
Կը յիշեմ մարդերով սաք տունը իմ...

Ես մոռնայ չեմ կրնար տունըս պզտիկ,
Միտս բռնող քախիծն անուշ, մրսերիմ...
Ապրիմ հո՛ն, ու անոր մէջ ալ մեռնիմ...:

... Ատունին, հովը սրտում աւտունին,
Հրծձագին կը բախէ դուռըս ուժգին,
Ու կ'առնէ, ու կը շանի գիս հեռուն...:

(3—4—3)

ՍԱՂԻՄԱԿԱՆ ԱՌԱՒՈՏ

Ջեռո՛ւն, մեջէն լեռներուն, հեծմ մը երգի, նուագի,
Բեկբեկ, խառնաօ, կ'երկարի.

Ու կը մեծնայ հորիզոնն բուրեան ու քամ լոյսերու
Ուրախութիւն սրտերու...

Օ՛, Օրհնութիւն մը ինչպէս կ'իյնայ արեւը վրան

Քաղաքի լուռ տուններուն,

Միջոցին մէջ կը լեցուի սարսուռն անուշ Սրբութեան,

Հազար ձայնով երգ անհուն...

Մեղր ու խաղաղ են ջուրերն, բոյր զեփիւռին մէջ համեղ

Մարդերը քաղցր այս առտու,

Նայուածն անոնց ըսպիսակ, մրտի խորհուրդը բիւրեղ:

Անձրեւահար հոգիս՝ ծառ.

Ըմպէ փրօտուն անբսօւեր, ըզգայ պարն այս լոյսերու

Տեսնէ այսպէս միտ պայծառ...

ՊԶՏԻԿԸ՝ ՈՐ ԿԸ ՄԵՌՆԻ

Ծւ դուն գիտե՞ս, խեղճ պղծիկ, ես ուզեցի որ հասնի...
Նոր էիր դեռ, երբ եկար աչքիդ մեղրով՝ շաղով լի.
Զայնրդ՝ հեռո՛ւ յիշատակ, ձեւերդ՝ սիրոյ վէսվէտում,
Այնքան անուշ, սիրտ առնող, լացընելու չափ սքսում:

Պահ մ'իճծի հետ, քիչ, սակայն հեռացուցի հեզ ինձմէ,
Քաղցրածաւալ հրնուանքն այդ ես չուզեցի ա'լ տեւե...
Քեզ մարեցի իմ մեջէն, խենք ըզգացում մը ինչպէս,
Բայց մեղքըցած՝ ա'ն, դարձեալ ես չուզելով կ'ուզեմ հեզ...:

Պիտի ուզեմ որ դուն գաս, հոգ չէ քե տա՛ս քիչ անգամ,
Մըսածումիս մեջ վախցած, այդպէս խորունկ ու տարամ,
Ու դուն հեզմէ ալ քիչցած, մոռցրելու պէս եղած...:
Խեղճ իմ պղծիկ, բայց երբ գաս, ես ա'լ իմ մեջ ըսուեամ,

Դուն՝ աւելի նոր ու բարկ, որպէս կարիլ մը քրքու,
Պիտի պեղես սրտիս մուք, խենք խօթութիւնը զրոյ,
Քեզ չունենալ կ'ընալու տառապանքին մեջ ուժգին,
Սրբ ան միմալ, ծըւարած, ըզգայ սուրսուռը կեանքին...

* * *

Հիմա, հեռու, խեղճ պղծիկ, ալ պրոցնում կուգաս ինձ,
Ու ես այդպէս կ'ուզեի, տարբեր չէի ալ կ'ընար,
Շքնապառն հեզ կազմելու, յարատեւ քաղցր ճիգիս մեջ,
Ես վարժելիմ զխորութեան, իր բրգրկնող անձրեւին...:

Պորտուգալացի քաղաքացի, մազերովդ ալ ներմրկած,
Աչքերուդ մէջ սեւ արիւն, ու շունչիդ մէջ ցաւը բաց,
Եկար, գողգոջ, կաղապէն, հին արուեստը հազած մեր,
Եկար հեռուէն, հեւացող, դուն՝ յոգնաբեկ՝ ազգի սեր...:

Ու պատմեցիր, չեմ գիտեր, վրասանելով քե վրհաս,
Պատմեցիր քե լացեր ես, երկար երկար դուն վրադ,
Կարմրած ես, ապրասամբ... եւ երբեմն ալ սոված,
Եւ միսի տեղ կերած հող, պրլլուելով դեպ Աստուած...

Ու կը նետես դու վրաս, աղանդերուդ փուռ ցանցէն...
Ունի՞ս արդեօք ալեհեր կրակ մը մէջը սրբիդ,
Եւ դեռ կրնա՞ս դուն ծրնիլ մանուկի մը պէս բոցէն...
Պեզուիլ կ'ուզե՞ս, դուն քեզմէ ունենալու սեր վրնիս...:

Երիտասարդը այսօր քեզ կը սիրէ հօր մը պէս,
Ու կը տանի, կը կրէ քեզ միսին մէջ ու արեան,
Քեզ կը մոռնայ երբեմն ալ, հաճոյքին մէջ ցաւն ինչպէս.

Բայց ի՞նչ մէջն ես, խուլ, նման կեանքի ետին յաւիտեան...:

Ե՛Ս, ԵՍ ԶԷԻ...

Քիչեր մը հով: Միս միևակ ծառերու հասս մուրին օակ,
Բերի աչքերը իմ հօր, դեմք բիբիս, անյասակ.
Զրգեցի զիս խորն անոնց, նանչնալու ես ալ ինձի,
Աս օրերուն — պողոտա՛յ դեպ կասարները յոյսի...

Խնձի համար անոնց մեջ՝ չըսեսնուած բաներ նոր..
— Անոր ջրղա՞ն եմ այսօր, փախած ինձմէ ու խժժոռ:
Տեսայ հոն խաժ երազներ, մրբուռ լեռներ ալ հեռո՛ւն,
Արեւ-ջուրներ, հող, երկինք... շարքն յետոյ շէ՛ն մահերուն...:

Տեսայ հոգին ալ անա, հոգին անոր այն խարտեա՛ւ
Համեղ՝ լուսնի շողին պէս կը յամառէր դեռ անմառ,
Որուն մեջ բուռ մը քսուներ ցաւն է անոր սեպհակաւ...

Հօր աչքերէն իմ սակայն, որքա՛ն օարբեր էի ես,
Ես չունէի ոչ երազ, ոչ ալ երկինք, ոչ հողի,
Մեռած ազգա՛ս՝ աչքերն իմ, անլոյս այսպէս ու անյոյս...

Յնցեալն ամբողջ հալած մուր... Իրա՛ւ ալ, *ես, ես չէի՛*....:

ԼՐՋՈՒԹԻՒՆ

Ձերան կողին հոծ, խորունկ, ծառասանի մը պես քաց,
Ո՛վ լրջուրիւն, սե՛ւ պարիկ, մեջն հոգիիս ես դիզուած...
Սակայն եղայ ինչպե՛ս խենք, գաղտնիքն իմ քեզ բռնելու,
Տարիքին դեմ ֆալսելով, քու մեջ ինքզինքս հիւսելու...:

Լոյսի, մեղրի զարուհիին, ես քեզ ի՛նչ սեր սիրեցի.
Էի զրդան որբի՛ պես, ու պարտաւոր ալ քեզի.
Ու զբզուանքիդ մուրին քակ, զբռնում այսպէս ու անքեզ,
Զիս կը փրցնուեմ ես իմ մեջ, պատրանաքափ, սքրսիս՝ վերք...:

Քու քաց բսուերըդ իջաւ դեռ նոր երգին իմ սքրսի,
Երազներուս հրդեհին՝ խոհեմութիւնըդ վաքի,
Երջանկութեանց ալ խորունկ ըզձալ քուի դուն ինծի...:

Քիչ մ'հեռացիր, լրջուրի՛ւն: Թեքեւնալ ես կ'ուզեի,
Պզտիկ հանոյք մը ծաղկեր հոգիիս մեջ ամայի,
Սենեակիս մեջ, մի՛ս միմակ, ֆաղքը արցունք ես լայի

Մեկուն համար, առանց քեզ, հե՛ղ մը գոնե, սքրսալի...:

ՊԶՏԻՎՍ, ԻՆԶՊԷՍ ԵՍ ՔԵԶ ԼԱՄ...

Յակաւ, տակաւ յուս մ'ինչպէս կը հեռանա՞ս խեղճ պզտիկ...
Ու ես քիչ քիչ չեմ յիշեր, քեզ հոգւոյս մէջ, ինձ մօտիկ...
Ինչպէս խոժոռ. օր մ'ամպոս, պուրակին մէջ ամայի
Նիհար ծառերն յիմար հովն կը բըզըթէկ տրտմալի...,

Ա՛ն, նիւղ այդպէս եր իմ սերս քեզի խորունկ, անաւոր...:
Բայց հանդարտած ես հիմա... զուր կը յուզեմ քեզ իմ մէջ,
Ով երբեմնի հոծ պարտեզ հովերով խենթ ու աղուտ...
Ամայացա՞ւ դուն այլեւս, ու բոյրդ եղաւ զոյն մը շէջ...:

Գիտե՞ս, պզտիկ, երբ իմ մէջ փորձես պոռալ ալ ուժգին,
Ծառերուդ մէջ կը ծաղկի հազիւ լուսնակ մ'այն գիշեր,
Ի՞նչ սառ ու խուլ լոյսերով, որոնք տակաւ կը մաշին...:

Ժամանակին մէջ այսպէս մերք կը սառնի սերք մեր,
Կեանքը կուտայ կեանքին տեղ ա՛լ ուրիշ ձա՛յն, ուրիշ համ...
Ալ իրարմ եմք տարբեր... Պզտի՛կս, ինչպի՞ս ես քեզ լամ...

Ձեռքը պզտիկ, ափիս մեջ լոյս է ամբողջ.

— Ցա՛ւ է, Պզտիկ, երգը համբուն անաւարտ.

Ձեռքը պզտիկ կը յուզէ ձա՛յն մը իմ մեջ...

— Ծանր է, Պզտիկ, մեռնիլն այսպէս հաս ընդ հաս...

Երգն իր կ'ըսէր. «Զիս՝ քե՛զ քրաւ սերը, խե՛նք...»:

— Ձրգե՛, Պզտիկ, որ ա՛լ դառնամ ե՛ս՝ ինձի.

Մութը քիչ քիչ կը դիզուէր ցո՛ւրտ, մեր սրտին.

— Թո՛ղ զիս, Պզտիկ, ձեռքդ ափիս՝ ա՛լ կ'այրի...

Երբ կը հասներ երգը՝ մութին՝ մեր համբուն,

— Կը զգա՞ս, քսի, քե այս մահն է մեր վերջին.

Ձեռքը պզտիկ քառեց իմ ձեռքըս ուժգին...

— Կեցած էի... Բայց ո՞վ էր որ կը մեկնէր

Հեռուէն, անոր իղձ հետքերէն — Ե՛ս էի...

— Կը տեսնէի, չէի տեսներ այն ասեմ,

Կեցած էի, մեկը կ'երբար — Ես էի...

— Բան մ'անձանօր ցաւի մը պէս կը հոսէր...

«Զա՛րկ ինձի նորէն, ո՛վ Յէր...»

Ֆրանսուա Կզավիէ

Քայց ինչպե՛ս, իմ մեջ նորէն կը զգամ Քեզ,
Ու նորէն կը շահամ իմ հոգիէն...,
Եւ այսպէս իմ մեջ դարձեալ կը տիրես...:

Այն ասէն..., մեծցող իրերը ամէն,
Հանոյքին գաղտնի դողը կը դողան.
Կը ծրծիկներ լոյս ու ձայն միջոցէն:

Ամէն բան գոյն մ'իւ վրայ կ'ըրելու
Քաղցր հեռանքն, քսես, հըծծէ այդ պահուն
Երգին մեջ ծաղիկներու, ծառերու...:

Կը կարի նայուածքէ՝ բան մ'հոգեղէն,
Ու ամէն անցնող հասակ, ձա՛յն կ'երգէ,
Ինձ հըպող մըրթնորսին դրպելէն...:

Ի՛նչ քաղցր է, այսպէս շահալը Քեզմէ...:

ԿՈՒՋԵՄ, ՊՁՏԻԿ...

Պ'ուզեմ, պզտիկ, քեզ սրխուր, սրխուր ինձմով միմիայն .
Դուն չըխօսիս ուրիշին, ոչ ալ ինձի, բայց լըռիկ
Վիճարդ խաղայ դեմքիդ վրայ, փայլի մը պես փոխանցիկ ,
Աչքերուդ մեջ զիս զբնեմ, այդ պահուն ձայնդ *խօսի* զիս...:

... Ու պահերուն իր սրբուն, երբ իմ հոգին է սրժգոյն,
Շուրջի սա կուլիւ մարդերէն՝ յոգնած , ինձմէ՝ սարսուղին,
Կ'ուզեմ որ գայ ու նըստի հոգւոյդ զուլալ աղբիւրին,
Առնէ կարօք ուժգին, իմէ՝ մեռնող մանկուքիւն...:

Այսպէ՛ս , աղուո՛ր , սրբմօրէն ես խառնուիմ ջուրերուդ...
Երբ որ քեզի, հեճանքով, տնայ ուրիշը սըլալ ,
Ըզգայ սարսուռ մը պըղտօր, ի՛մ իսկ լեզուէն հոն կարած ...:

Այսպէս, պզտիկ, ես կ'ուզեմ, երգը կապոյտ ֆու սրտին,
Իմ երգս ըլլայ գոյնըզգոյն շաքարուանին պէս մեկին.
Նւ հրեւանք մը ծաղկի, հոգիիդ մեջ, իրա՛ւ, լայն,

Որ կը մնաս միշտ պզտիկ իմ հոգիիս մեջ միայն...:

Հայր Թորգոմին

Դնչպես արեւը նիհար, զարնան առնուն կը քշի,
եւ ամպերուն քաքն իսկոյն կը փոխէ զայն անուրջի,
Ինչպես շողերն ալ անոր կաթիլ-կաթիլ կը կուրնան,
Իմ այս պզտիկ կեանքն ալ կուրցաւ անոնց նիւթը նըման...:

Եւ կոյր այսպես, անիկա, միշտ ինքն իր մէջ լեցուեցաւ...
Եւ անոր խեղճ պարտեզին մէջ չը մնաց ալ բընաւ
Ոչ մէկ ծաղիկ՝ չը քօշնած, եւ ոչ մէկ իղձ՝ չը խամրած...,
Ամպերը զոռ միայն հոն անձրեւեցին ծանր ու ցած:

Պրդտոր օրե՛ր դուք զարնան, սեւ սեւ ճանկեր նենգաւոր:
Ինչպես կ'ըլլայ, չեմ գիտեր, անձրեւէն վերջ, քիչ մը հոկ,
Խուլ ճառագայթ մը անզուսպ, կը տոյէ լուռ, դողալով
Հողին մէջ հոն խոր բացուած ջրակայքերը բոլոր...:

Յետո՛ւ... նորե՛ն տրտում, սիրտ բըզբտող երկինք սեւ,
Ու փառառում ալ դարձեալ, քիչ մը զուարթ ու քերեւ...
Ու տարուբեր կեանքն այսպես կ'իյնայ, կ'ելլէ անընդհատ
Կը սրբութիւյն միշտ նիհար.— միշտ ցուրտէն վերջ արեւ վառ:

Չանցնի՞ր մտքն քաւ փոխել բռնի, երկինքն այս քրտուռ,
Ու պարտեզիդ վերեւ ողջ. կապոյտ, խաղաղ երկինք վառ.
Շինել արեւ մ'ալ վրճիս... ժրպիտի տակ, սրտի պէս
Դուն անոր տակ պզտիկ կեանք, ինքզինքդ ու զիս տաքցընես...:

Այնուհետև պարսեզիդ. կը բանայ լոյս մ'ամեն ալ,
Կը կազդրսին ջուրերն իր, ազատ հեւքով մը անփակ .
Ու ծառերու բընուքեան կ'անցնի շող կեանք մը աղուոր,
Ու բիքեռներ կը ծայսին ծաղիկներու վրայ նոր...:

Կը վարանի՞ս...: Բայց պիտի անիս երբ դուն յուսաս
Այդ երկնքին վրայ պերն, պըտուղին պէս նորահաս...
Պիտի անիս ու յորդիս, միշտ լեցուելու փոխարեն,
Պիտի հեւաս ալ ուրախ, լոյսի մը պէս՝ բաշխելէն...:

Սակայն որքա՛ն պզտիկ ես, պզտիկ հոգւով ու մըտքով
Որ չես կրնար հաւատալ, տառապանքի սուրբ ճամբով,
Արեւ-կեանքի բարիքին, պերն հասակին այն աղու...
Ն՞րբ այսօրէն, պզտիկ կեանք, դարձար կեանքով փորձառու...:

ՀԻՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆ

Յաւ մը կուգայ հեռուէն, հի՛ն մեղեդի .
Դող ու սերել կ'իյնան մէջէս, միտս, կարծես .
Անցեալի՛ հով, կայ գաղջ մըսուք մ'ամեն դի...
Աւնան-արեւ իրկունքի պէս կը զգամ ես...:

Իմ սրբիս մէջ, լո՛յսը հիւանդ իրկունքին .
Հովը կ'անցնի... հո՛ն ցաւագին ձայներէն՝
Նինար ծառերն ալ կը ծռին, կը ծռին...
Կը սրբութիւն անուն մ'ամեն բան, նորէն...:

Ահա դըպիլ կուգան իրեր, հոգիներ,
Կը փաղցրանան ցաւերն ինձի հին բնկեր,
Ու սրբի պէս յուս մը իմ մէջ, կ'արիւնեն...:

Ու կ'առնուիմ տառապանքի դողէն այս պահուն,
Կը դառնամ ես, հին իրերուն, ցաւերուն,
Ու կը սկսիմ կեանքը նորէն, յիշելէն...:

ԼՈՅՍԻՆ ՄԷՋ...

Յուդարկաւոր էի ես մեջը զուարթ արեւին...
Տըխո՞ւր, հեռո՞ւ, ո՛վ գիտէ: Ճամբուն վրայ սա լրժու՛ն:
Երբ բոցին մեջը լոյսին, ձե՛ւ մը աղուոր ու զեղուն,
Պզտիկ, ամբողջ ինքզինքով, անցաւ յուզում մը խորին:

Պահ չունեցաւ նայուածքն իմ հեճֆերն ի վար փայլերուն,
Երգի մը պէս հեռացաւ, տեսիլքն այն քարմ ու հարուստ,
Ու աւելի՛ շա՛տ անկէ, ծանո՞թ, նրման ալ ինծի...
Ո՛վ իմ Տըրտում ու զաղճնի պատանուքին աղարծի...

Դո՛ւն էիր ան՝ որ այսօր քեզ հոգիով ես հանչեայ.
Նայուածքիս մեջը լեցուն , դուն կը փախիս ալ հիմա.
Ու կը հանչնամ ալ ես քեզ, մուրն ինչպէս ջերմը լոյսին...:

Եկուր այսպէս դուն անցնիլ զաղճնի, հովովդ այդ հրպարս,
Ու փոյր չէ քէ մէկ վայրկեան սիրած բզգամ ե՛ս ալ զիս,
Ու օրերուն մեջ Տըրտում միայն հասակըդ բըխի

Իր լոյսին մեջը հարուստ, ու իմ մեջ սիրքս ցարի...:

ՆԱՅԷ՛ ԱՆՈՆՑ, ԽԵՂՃ ՀՈԳԻՍ..

Շայե՛ անոնց, խեղճ հոգիս, չբոսեցան ալ քեզի:
Այնուհետև որ լռիկ, քրեաւառութեանդ ուսերուն
Նեւեցիր թելդ, ու անզուսպ զայն գրկեցի՛ր... , ես լացի՛:
— Այն իղձերուդ՝ շատո՛նց ծեր, մութ սերերուդ սաւսրուուն...

Դուն մընացիր քեզի հետ, բու բաղձանքիդ մեջ, հեռու՛ն...
Ասոր համար ալ յոյզով, ամեն գիշեր, ո՛ւժ՝ անհուն,
Պրտքեցար մի՛ս մինակ, նամբու վրայ քեզի բաւ,
Որուն ֆովիկ, մերթ բըռնող, սեղմ խուցէն լոյս մը խոնաւ...:

... Ալ քեզ շատո՛նց են զրտած, խոժո՛ւ, ըսուեր մեջդ ամբողջ,
Պա՛ղ ալ, փախչող ու սխուր, դուն քեզ համար վատառողջ... ,
Յետոյ; հեզմոտ ծիծաղներ, կ'ըսեն որ «Մեծ է անի...»:

Բայց գիշերուան քաթին տակ , նոնիներու շունչին մօտ,
Կենա՛ս, հոգի՛ս, ու նայիս վիշտ աչքերով բու աղօտ՝
Ջրլչիկ մը մերթ լոյսին մեջ, կը լուայ փորն ու կ'անցնի...:

ԱՆ ՉԻ ԳԱՐ...

Պնճրեւին՝ դեռ կը փախն առանձին...
Այս հովին, խօլ՝ ծառերուն ալ սրտին՝
Իր անձին բացակայ՝ ցաւը՝ մըքին...:

Ու ցաւ կար, սար նայուածքիս մեջ երկար.
— Ան չի կար, քերեւս բնաւ ալ չըգար,
Սիրսս ինչքան, քաց լոյսերովն իր, զի՛նք լար...:

Ու մինա՛կ, եւ ամէն ինչ լոյսէ փակ.
Ըսե՛ս ալ, սրտիս զարկին պէս խառնակ,
Քայլեր տալ կը հեռանան հովին տակ...:

Ես՝ որքան փախի, քրքրեմ այս մութուն,
Խօլքն հովուն մինչ կը զարնէ ծառերուն...
Իմ սրտի լոյսը այսպէս կը սրտին...,

... — «Ե՛րբ կարի պիտի հասակը բարի»...

(3—4—3)

ԳՈՅՆԵՐԸ

Պոյներն ինձի, ձայն իբրեւ, մըսերմօրէն կը բացուին...

— Կապոյճը զիլն է, այն զով ջուրերուն պէս մանկային,
Իր մէջ այնքան կայ գորով, որ մըսերիմ ամենուն,
Աւելսարհ մ'է ուր մասնեցով, մենք կը դպինք Աստուծուն...:

Մանիշակի գոյնն՝ քսուելն կ'երգէ քաղցր, պարմանի,
Դեռ չը բացուած սրտուրիւն, սարսուռ, երազ, ցե'ր գաղտնի,
Խառնեալն հասուն, Սոսկն է դաւն, ոլորումին մէջ ուժգին
Երիտասարդ ու հնչել, իզձն՝ արիւնձող հասակին...:

Սակայն Կանաչը խորունկ իր հնչումին մէջ այն շէն,
Կը ժայթքէ ուժ ու իմաստ... Ու Կարմիրին գոռ բամբէն
Կուգայ հոգին քիչ մը մութ...: Ձայներ՝ ամենքն ալ կեանքին:

Այսպէս թարբեր հոգիով համերգը լուռ գոյներուն...
Որուն դիմաց սրբիս մէջ այնքան կ'ապրիմ հոծութիւն,
Որ ես մինակ՝ մարդերէն, ա'լ չեմ մընար առանձին...:

Սոսկ=Ténor Կոմիտաս Վրդ. ի կողմէ գործածուած բառ:

ՎԵՐԱՑՈՒՄ

Պւ երբ կուգաս ինձի դուն, ու կը հընչէ քու փափուկ
Մարմինիդ ետքը խարսեաւ, խառնակ դողին մէջ բուրեան,
Ուրկէ՞ ինձի, խեղճ աղջիկ, սա Տըխուրիւնը տափուկ,
Ու զիս կ'առնէ քեզմէ վեր, մէջն ուրիշ մեծ Հեռուրեան...

Ոգեղէն բոյր մը անա քու հըրապոյրն ու շրպար՝
Վայր երազի՝ գոյն կ'երգեն ուր ծաղիկներ բազմալար,
Անուշ՝ մեղքերն աչերուդ, ի՞նչպէս յուզում մը տան սուրբ,
Մինչ քու ձայնըդ կը վառի իմ մէջ ինչպէս ցաւ մը նուրբ....:

Մըտածել քեզ կը բաւէ որ քու հասակդ դեմքս վեա ,
Բոց մը ինչպէս , հո՛՛ճ, պարեւ, եւ ցաւս հալի լոյսի պէս...
Եւ ես ծըծեմ, գաղտնորէն, Ներկայութիւնդ այն տեսն,
Մինչ տուրջս ամեն ինչ քեզմով՝ ուրախ շընչէ ձեռն իրեն....:

Կը մօտենաս երբ ինձի, կը հըպիս ալ այսպէս խոր,
Եւ կը լսեմ հին երգէն ինչպէս ցարոյ շեռ մը նոր,
Ու կը զգամ ալ իմ մէջէն կը բարձրանայ անա վեր,

Ես՝ իր մէջէն, ինձ՝ ինձմով, մենք կը զսնենք Սերըդ, Տէ՛ր....:

Ա.-ԻՆ

Մի՛ս այսպէս, մենուրեան մէջ կը զգամ քեզ...

Երբ կը քուի քե անտառ մ'եմ ամենի,
Ուր կ'ապրի դար մը ամեն ծառ մայրի,
Որ ունի տալիս մը կախ՝ ամեն դի...,

Չեմ գիտեր զարուհն այնտեղ է դըպե՞ր,
Ու երգե՞ր են այդ ծառերը յոյսեր,
Կամ բուրե՞ր հողերը հոն ծաղիկներ...,

Ո՛վ նոր արփ, նըժոյգ մ'ինչպէս, քարմ, հպարտ,
Հով մ'ահա յանկարծահառ կը սուրայ,
Կը սարսուռայ սրտէն՝ անտառն հընամեայ...:

Ծառերէն կը հեւայ լոյս մ'այն տեսն,
Խոյսատէն, հողերը գոյն կը խըլեն,
Կը փակեն տալիղներն երգ մը խորէն...

Մի՛ս այսպէ՛ս մենուրեան մէջ կը զգամ քեզ...:

(3—4—3)

Մինչ կուգայ աղջիկն՝ անձրեւ հեղասահ,
Հեռակայ՝ իմ մեջ կարծես իրմէ պահ
Ձայն մ'անա կը պրլպրլայ, կը հեւայ...

Ան՝ պզտիկ օտարունանի պես աղջիկ,
Գոյներէն օրջագոյնսին իր ալիք,
Կը նետէ ծաղիկներու պար մը գիրկ...:

Մեղր աչքէն, իր յարածուփ հասակէն,
Գաղտնօրէն հրպանցնող ցաւն իր լոյսէ
Բըզզալէն՝ սրբիս խորիսիս կը հիւսէ...

Ան՝ լոյսի կարկաշ աղջիկ՝ կը հոսի,
Մինչ, անա, գործ պողոտան մարդով լի
Առօրի խուլ ձայներէն կը յոգնի...:

(3—4—3)

Ես գրեայ, իբր յայտնութիւն մը տեսայ,
Առաքւայ պէս՝ նո՛ր երկիր իմ ահա,
Մինչ քեզ ես չէի կարծես ըստաւեր...


Գրեայ քեզ, կարմիր աղջիկ մը ինչպէս,
Կ'արեւուն բառովը խենք, ձիւն վէս,
Կը կանչես զօրեղ բազուկ, սիրտ իմ քեզ...

Ու վազեդ՝ լեռ ու արօտ լոյսի վէտ,
Զուր ու վեմ, ծաղիկի բոյր՝ երգ յաւետ,
Վարեղեն նոր կիրք ու միտք քեզի հետ...

Գրեայ քեզ, կասարը շանքը ինչպէս,
Եւ առի հրդեհի անհուն տենչանքի,
Որ քու դեմ ելնեմ բազկով մ'արժանի

Դուն իմ դէզ, կարմիր աղջիկ, հայրենիք...:

(3—4—3)



ՅԱՆԿ

Նամակ Ծ. Ռ. Պէրպէրեանէ	ԻՋ
1. Վահան Թէքէեան	11
2. Իմս Չես	12
3. Անցնողը	14
4. Գիշերը Վանքի Բակին	15
5. Օձը	16
6. Պատուհանէս	17
7. Ա՛հ, Այդ Իրիկունը Աչնան	18
8. Ըղձանք	19
9. Իմ Պզտիկ	20
10. Գնա՛, Պզտիկ	21
11. Իրիկունին Հետ	22
12. Յիշերդ	23
13. Սաղիմական Առաւօտ	25
14. Պզտիկը Որ Կը Մեռնի	26
15. Ազգի Սէր	27
16. Ե՛ս, Ես Չէի	28
17. Լըջութիւն	29
18. Պզտիկս, Ինչպէ՛ս Ես Քեզ Լամ	30
19. Մեկնողը	31
20. Քեզմէ	32
21. Կ՛ուզեմ, Պզտիկ	33
22. Պզտիկ Կեանքը	34
23. Հին Հիւանդութիւն	37
24. Լոյսին Մէջ	37
25. Նայէ Անոնց Խեղճ Հոգիս	38
26. Ան Ձի Գար	39
27. Գոյները	40
28. Վերացում	41
29. Միշտ Այսպէ՛ս	42
30. Ճամբուն Վրայ	43
31. Հայրենիք	44

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0316574

ԳԻՆ 40 ՖՐ.



Հեղինակին հասցին.—

G. MEGUERDITCHIAN

B. P. 303

ALEP-SYRIE